



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1901

ԹԻՒ 9

ՋՐԶԵՂԵՂԸ

Երկրիս վրայ եկող բոլոր աղէտներուն ամէնէն սոսկալին ջրհեղեղն է: Կարելի է թէ ջրհեղեղէն կորսուածներուն թիւը անկէ ետքը պատահած աղէտներէն մեծնողներուն թիւէն աւելի չէր: Կը կարծուի թէ Չինաստանի մէջ սովին մէկ անգամ պատահելուն ատենը տասը միլիոն կամ աւելի բնակիչներ մեռած են: Եւ քանի մը հարիւր տարի առաջ ժամտախտը, կ'ըսուի թէ, իտալիոյ մէկ մեծ մասին բնակիչներուն կէսը տարաւ, և սոսկալի աւերած գործեց Եւրոպայի ուրիշ մասերուն մէջ: Կարելի է ջրհեղեղը չկորսնցուց այս քան կեանքեր: Չենք կրնար գիտնալ թէ որքան կեանքեր կորսնցուց, ինչու որ չունինք վատահելի հիմ հաշուելու համար թէ այդ ժամանակ աշխարհի բնակիչներուն թիւը ինչ էր: Ջրհեղեղին սոսկալի հանգամանքը սա էր որ անիկա ամբողջ մարդկային սեռը կորսնցուց բացի մէկ ընտանիքէ: Թերևս մարդիկ տակաւին հեռուն ցրուած չէին այն տեղէն ուր անոնց նախահայրերը կը բնակէին: Եւ հաւանական է թէ ջրհեղեղը մասնաւոր տեղի մը մէջ եղաւ, այսինքն ծածկեց երկրիս այն մասը միայն, ուր մարդիկ կը բնակէին: Բայց անիկա սոսկալի էր, ինչու որ կը ցուցնէր մեղքին պտուղը և հետևանքը: Իրօք ամէն մէկ մահ մեղքին պատճառով կը պատահի: Մենք մանկիկի մը մեռած մարմնին վրայ կը նայինք, և գիտենք թէ, թէպէտ անիկա անձամբ մեղանշած չէ, բայց անոր մահուան պատճառն այն է որ աշխարհի մէջ մահ կայ: Եթէ մարդս երբեք չմեղանշէր, մարդ պիտի չմեռնէր: Եւ Աստուած ջրհեղեղը դրկեց աշխարհիս վրայ աշխարհի օգտին համար: Աւելի աղէկ



էր, մարդկային ցեղին ապագային համար, որ այդ չար և ամբարիշտ ազգը կորսուէր, և նոր ազգ մը ելլէր Նոյէ, որ «Աստուծոյ հետ քալեց»: Բայց ինչպէս ահռելի բան էր այն հաղաբաւորներուն և թերևս միլիոնաւորներուն համար որ կորսուեցան: Զուրբերուն շատ բարձրանալէն առաջ, անոնք փախան տեղէ տեղ, բայց ապա տուժ չկար, և վերջապէս շուրբըրը ծածկեցին տապանէն դուրս գտնուողներուն մէջէն ողջ մնացողներուն ամէնէն վերջինը: Երբ կը ջանանք երևակայել այն քառասուն ցերեկ ու քառասուն գիշեր անընդհատ եկող անձրևը, թող մեր միտքերուն վրայ տըպաւորուի սա դառը թէ Մահը մեղ-

քին պտուղն է: Բայց եթէ զղջանք մեր մեղքերուն վրայ, և ներում ընդունինք Աստուծմէ, մինչև անգամ մահը օրհնութիւն կ'ըլլայ, ինչու որ անով աւելի աղէկ և աւելի երջանիկ կեանք մը կը մանենք:

ՕՐԻՆԱԿԻՆ ՎՐԱՅ ԶԱՓԷ

Անգամ մը տեսայ որ հիւս մը երկայն տախտակներ կը կտրէր: Անիկա պէտք ունէր միկնոյն երկայնութիւնն ունեցող խել մը կարճ տախտակներու: Զգուշութեամբ չափերու պատրաստեր էր իր օրինակը և անոր չափին վրայ տախտակ մը սղոցեր էր: Այս տախտակը մէկ կողմ դրաւ և իր օրինակը գոր-


ծածեց յաջորդ անգամ կտրած ա- տենը: Այնուհետև դիտեցի տեսայ որ ամէն անգամ նոյն բանը կը կրկնէր: Փոխանակ վերջին կտորով չափելու, որ գործելու աւելի արագ կերպ մը պիտի ըլլար, միշտ առաջին օրինակով կը չափէր: Հարցուցի պատճառը: «Հարկաւ կը ջանամ», ըսաւ, «ամէն մէկ կտոր ընել ճիշդ պատրաստած օրինակի նման. անոնք պէտք է որ ամէնն ալ միեւնոյն մեծութիւնն ունե- նան: Բայց սղոցելու ժամանակ կրնայ ըլլալ որ քիչ մը տարբեր կտրեմ: Այ- նուհետև եթէ ուրիշ մը ասով չափեմ, տարբերութիւնը կրնայ աւելնայ. և երբ երկուստանեակ մը բան կտրեմ այս կերպով, ամէն մէկը իր նախոր- դին վրայ չափելով, ի՞նչ պիտի ըլ- լայ հետևանքը: Երբ սորվեցայ արհեստս, սորվեցայ նաև միշտ օրինակին վրայ չափել գործս:»

Ես իսկոյն տեսայ և հասկցայ թէ հիւսիս կանոնը օգտակար է տախտակներ կտրելէ շատ աւելի կարևոր շատ մը բանե- րու մէջ: Այն սովորութիւնը զոր արդի ուսումնականները կը գործադրեն և աղբիւրներուն և ակերուն կ'երթան իրենց սոր- վելու իրողութիւններուն հա- մար, այս տեսակէն է: Պատ- մութեան մէջ, փոխանակ վեր- ջերս գրուած դասագիրքեր միայն կարդայու, ետ կ'երթաք այն յիշատակարաններուն և պաշտօնական արձանագրու- թիւններուն, որոնք պատրաս- տուեցան այն թուականին զոր կ'ուսումնասիրէք: Քիմիաբա- նութեան և բնագիտութեան

ուան և ամէն բանի համար Յիսուսի նայեցէք միայն: Այսպէս ըրէք ձեր ապրելու բոլոր ծրագիրներուն և մե- թոսներուն մէջ: Աշխարհ լեցուն է ազդու օրինակներով: Ամէն կողմէ կը յանձնարարուին օգնելու, զարգացնե- լու և փրկելու ծրագիրներ և գաղա- փարներ: Յորչափ անոնք իրենց ներ- շնու մը կ'ընդունին Աստուածաշնչէն և փրկչէն, աշխարհի օրհնութիւն են: Բայց փորձեցէք զանոնք օրինակին վը- լայ չափելով: Սորվեցէք ըսել, «Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է, ու իմ շաւիղներուս լոյս»:» Ետ գացէք հին ճամբուն զոր Յիսուս սորվեցուց, և թող Անիկա առաջնորդէ ձեզի, եթէ կ'ուզէք շատ օգտակար ըլլալ աշխար- հիս մէջ:

և հիմնական շքեղ շէնքերը աւար- տեցան: 1898ին 1820 ուսանողներ և 38 փրոֆէսորներ կային: Ուսուցիչնե- լը հինգ կաճառներու կը բաժնուին իրենց աւանդած ուսումներուն համե- մատ, որոնք են արուեստներ, (այն է՝ լեզուներու սովորական գոյէճի ընթաց- քը, Մաթեմատիք, և ինչ) Աստուածա- բանութիւն, Օրէնագիտութիւն, Բժշը- կականութիւն և Գիտութիւններ: Կլասիկոյի և Ապէրտինի համալսարաննե- լը իրենց կողմէն անդամ մը կը զրկեն խորհրդարանը: Խորհուրդի Համալսա- րանը շատ մը աւելի մեծ է, վասն զի նոյն տարին ունէր 2,780 ուսանող:

—→→→→→  
ՓՈՐՁԻ ԴՐՈՒԱԾ  
Ճան Տին փորձի դրուեցաւ ընդար-



մէջ դուք ձեր գիրքերուն միայն չէք թողուիր, պէտք է որ իրողութիւն- ները ստուգէք բնալուծարանին մէջ փորձեր կատարելով: Պէտք չէ ու- իցէ բան երկրորդական և երրոր- դական ձեռքերէ ընդունիլ: Այս կա- նոնը շատ մը աւելի կարևոր է ձեր կեանքի ընթացքին և վարքին մէջ: Պէտք է որ ձեզի առաջնորդ և օրի- նակ փնտռէք ամէն ուղիղ վարքի աղ- բիւրը, կատարեալ կեանքի Միակ Օրի- նակը: Ուրիշներ ջանացած են Յիսու- սի հետևիլ, և ոմանք յաջողած են բարի կեանքով ապրիլ: Բայց մինչ ա- նոնք կրնան ներշնչել ձեզ և խրախու- սել, ձեր օրինակը չեն: Երբ նախնի հաւատացեալները սկսան մարդկային օրինակներու նայիլ փոխանակ Յիսու- սի նայելու, սկսան կամաց կամաց հե- աւանալ ճշմարտութենէն: Ամէն օր-

ԿԱՍՍՎՈՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ  
Կլասիկոյի Համալսարանը հիմնար- կուեցաւ 1430ին Էտուրրո Զ. Թա- գաւորին մէկ հրամանագրով: Պըղ- տիկ հաստատութիւն մը մնաց անի- կա մինչև 1577, երբ նոր հրամանա- գիր մը տրուեցաւ, որմէ ետքը աճե- ցաւ և բարգաւաճեցաւ: 1864ին հին շէնքերը ծախուեցան 100,000 Անգլ- ոսկիի, և ընդարձակ գետիներ ծա- խաւ առնուեցան ֆլայտ գետին մէկ ճիւղին, ֆէլլինի, վերևը գտնուող բլրի մը վրայ որ ֆլայտ հովիտին մէկ գեղեցիկ տեսարանին կը նայի: Նոր շէնքին հիմնաքարը դրուեցաւ 1868ին: Կառավարութիւնը 120,000 ոսկի նը- պաստ տուաւ, և քաղաքայինները 160,000 ոսկի, բայց տակաւին բաւա- կան չէր ստակը: Այնուհետև 100,000 ոսկի տուին երկու հարուստ անձեր,

ձակ վաճառատան մը մէջ: Անու- մը համար էր փորձը, և եթէ ամսուն վերջը գոհացուցիչ գտնուէր ան, վաճառատան կանոնաւոր գործա-ւորներէն մէկը պիտի ըլլար: Որով-հետև անոր ապագան իր ընթաց- քէն կախեալ էր մեծ մասամբ, երի- տասարդը հարկաւ կը ջանար իր բոլոր կրցածն ընել, և ամէն կերպով կ'աշ- խատէր իր գործատէրներուն համա- բու մը վայելել: Օր մը, ամսուն վեր- ջերը, Մր. Ֆոսթըրը, վաճառատան պետը, ձանք կանչեց իր առանձին գրասենեակը, ըսաւ որ նստի և սկը- սաւ խօսիլ զուարթութեամբ անոր հետ անոր գործին վրայ: «Տին», ը- սաւ Մր. Ֆոսթըրը, «դուք ձեզ շատ հաւնեցուցիք մեզի: Դուք աղէկ ու- շադրութիւն ըրիք գործին, շուտ կը հասկնաք ինչ որ պէտք է ընել և հա-


ւատարիմ ու նախանձաւոր էք մեր շահերուն: Եթէ այս կերպով շարունակէք, կարծեմ պէտք չէ տարակուսիլ թէ ձեզի մնայուն պաշտօն պիտի յանձնենք: Զայս կ'ըսեմ ձեզ խրախուսելու համար, և վասն զի կը փափաքիմ ձեր աղէկութեանը:» «Ես» պատասխանեց ճան, այտերը ուրախութենէն կարմրած, Մր. Գոսթըրի քաղցր խօսքերը լսելուն համար. «ես շատ շնորհակալ եմ ձեզի թէ՛ ձեր տուած գովեստին և թէ՛ խրատին համար: Գիտեմ թէ կատարելու եմ իմ պարտականութիւններս, և չկայ բան մը զոր աւելի սիրեմ քան մնալ ձեր գործին մէջ:» ճան կը պատրաստուէր ելլել և երթալ նորէն իր տեղը վաճառատան մէջ: «Կեցէք վայրկեան մը» ըսաւ Մր. Գոսթըր, և փոքրիկ սենեակ մը մտնելով շիշ մը գինի բերաւ և բաժակ մը լեցուց այն փայլուն հեղուկէն: «Երթալէդ առաջ խմէ այս բաժակ մը գինին» ըսաւ վայրկեան մը ժամանակ ճանի միտքը չփոխութեան մէջ ինկաւ: «Եթէ մերժեմ այս գինին» ըսաւ ինքնիրեն, «թերևս բարկացնեմ Մր. Գոսթըրը, և տակնուվրայ ընեմ բոլոր ապագաս: Բայց ի՞նչպէս կրնամ առնել զանիկա: Ես մօրս խոստացած եմ թէ բնաւ պիտի չլսմեմ գինովցնող ըմպելիք, և ասկէ դատ, վտանգաւոր է իմեղը:» ճան սկզբունքի տէր երիտասարդ մըն էր, և շուտով տուաւ որոշումը: Մր. Գոսթըրի երեսը նայելով ըսաւ հանդարտութեամբ և որոշակի, «Ներեցէք, Մր. Գոսթըր, ես երբեք չեմ խմեր գինի:» «Ինչո՞ւ» ըսաւ գործատէրը, «բաժակ մը աղուոր գինին ձեզի չմնասեր: Բաց ի ատկէ, շատ քաղաքավարութիւն չէ մերժել այս տեսակ նուէր մը:» «Թերևս» ըսաւ ճան, նորէն իր երեսը կարմրած, «բայց ես մօրս խօսք տուած եմ երբեք գինի չխմել. ասկէ դատ, կը վախնամ թէ խմելու կը վարժուիմ: Ներեցէք ինձի, Մր. Գոսթըր, իրաւ որ չեմ կրնար խմել:»

Այնպէս որոշակի և հաստատ կերպով ըսաւ ճան այս խօսքերը, որ գործատէրը նորէն տեղը տարաւ բաժակը: Ժամանակ մը մտածեց այս բանին վրայ, և երբ նորէն ետ դարձաւ, աչքերուն մէջ թացութիւն մը կը տեսնուէր, և խօսած ատենը ձայնը կը գողգողար քիչ մը: «Տի՛ն» ըսաւ, «ես ուզեցի զխմելու թէ դուք կրնաք փորձութեան դէմ դնել: Դեմ դրիք ազնուաբար: Զեռքդ ինձի

տուր, տղաս: Տուն գնա, և բսէ մօրդ թէ ինք այնպիսի որդի մը ունի՝ որով կրնայ պարծենալ: Երբ ձեր փորձի ամիսը լրանայ, կրնաք դուք ձեզ այս վաճառատան կանոնաւոր մէկ քարտուղարը համարիլ: Եւ Աստուած միշտ օրհնէ ձեզ և հաւատարիմ պահէ:»

ՊԱՏ. ՄԿՐՏԻՉ ՔԻՐԷՆԶԵԱՆ

Երբ ասկէ իբր տասնութ տարի առաջ Կ. պոլիս եկանք, մեր տեսած ազնիւ անձերէն մին էր Պատ. Մկրտիչ Քիրէնզեան, որու հետեւեալ համառօտ կենսագրութիւնը կը քաղենք անոր դուստրին մէկ գրութենէն.



Պատ. Մկրտիչ Քիրէնզեան թէ և արհեստաւորի մը որդի էր, ունէր բարեպաշտ մայր մը՝ և ի մանկութենէ հետամուտ էր ուսման և կրօնի. իր տղայ հասակէն աշակերտած էր իր հօրեղբոր քով, և հոն պատրաստուած էր ուսուցչութեան պաշտօնի՝ զոր վրեց զանազան հարուստներու տուններ բարի համբաւով: Ի սրտէ կը փափաքէր աւետարանական պարզ ճշմարտութեան անխարդախ կաթին, երբ հանդիպեցաւ առաջին միսիոնար Տր. Կուտէի՝ որու հետ տեսակցութեան ատենն գտած էր արդէն այն գանձը որուն կը բազձար յոյժ և ամենայնիւ կարօտ կը զգար ինքզինք:

Պատ. Մ. Քիրէնզեան բոլորով սրտիւ յարած էր ճշմարտութեան, միշտ հաւատարիմ իր ուխտին՝ օրէ օր աւելի մօտ ապրելով իր Փրկչին, մինչև որ երջանիկ և խաղաղ մահով դնաց հանգչիլ անոր բազկաց մէջ: Երեսուն տարեկան հասակին մէջ մտաւ Տր. Համբիսի Աստուածաբանական գործը, և հոն աշակերտեցաւ իբր չորս հինգ տարիներ. այնուհետև ինքզինք նուր

րեց քարոզչական պաշտօնին բոլոր անձով և բոլոր հոգիով:

Ճան մէջ գորովագուծ հայր մըն էր հոգածու փափկասիրտ մօր մը նման, իր զաւակաց հոգւոր բարորութեան ու բարոյական նկարագրին նոյնքան արթնութեամբ կը հսկէր և հոգ կը տանէր, որքան պիտի հսկէր և հոգար անոնց մարմնաւոր անհրաժեշտ պէտքերուն: Յօժար և մարդասէր հիւրընկալութեամբ կ'ընդունէր բոլոր հոգեւոր պաշտօնեաներ, որք կ'այցելէին իր տան. անոնց ընկերութիւնը իր մեծ հաճոյքն էր, որոնց հետ կրնար խօսակցել Տէրոջը գործին և Աւետարանի տարածութեանը վրայ:

Առաջին անգամ Տրապիզոն ղրկուեցաւ Պորտ Բնկերութեան կողմէ, ուր քանի մը ամիսներ կենալէ ետքը դարձաւ Ի Կ. պոլիս: Յետոյ ի Ռոստոպո հովիւ ձեռնադրուելով, վեց եօթը տարիներ հոն անցուց. երկու տարի Պիլէճիք և երկու տարի ևս Ագրիանուպոլիս, յետոյ դարձեալ Կ. պոլիս գալով Պալատի մէջ դպրոց և ժողովարան մը հաստատեց: Թէ և շատ յաջող գործ մը եղաւ այդ սկիզբէն, սակայն չենք գիտեր ինչ պատճառաւ Պատ. Միսիոնարք այդ գործը վերջացուցին: Ինք միշտ անոնց հետ գործակից էր կատարեալ համաձայնութեամբ, անոնց սկզբունքները կը յորդէր, և իրովին վստահ էր թէ անոնք ժողովուրդին լաւագոյն բարոյն աշխատողներ են: Իր վերջին տարիները Պայպըլ Հաւուսի մէջ էր, և Միսիոնարաց հետ Աստուածաշունչի թարգմանչութեան կը պարապէր, միշտ քարոզելով, իր բնակութիւնը ուր որ ըլլար:

Պատ. Մ. Քիրէնզեան ննջեց Ի Տէր իր տան մէջ, Խուկիւտար, Օգոստոս 7, 1891ին:

ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ՀԱՄԱՐՈՂ

«Զապէլ, ահա մօրդ հանդերձանոցին բանալին» ըսաւ հայր մը իր՝ մօրմէ որբ մնացած աղջկան և միակ զաւակին, անոր 18 տարեկան եղած ժամանակը: «Առ ասիկա, և ուզածիդ պէս մօրդ բաները աչքէ անցուր: Դուն հիմա անոնց յարգը ճանչնալու տարիքիդ մէջ ես:» Զապէլ շուտով աչքէ անցուց իր դեռած մօր ունեցածները: Ճիշդ կրնար լինել թէ անգամ մը երբ պզտիկ մանուկ մըն էր, իրեն քաղցր համբոյր մը տուաւ անկողինին մէջ պառկած տփոյն տիկին մը, և յաջորդ օրը իրեն բուռեցաւ թէ մայրը մեռած էր: Եւ մինչ կը զննէր

այն երկար ատենէ ի վեր չգործածուած հանդերձները, շատ կը փափաքէր որ այն գեղեցիկ մայրը իր քովիկն ըլլար: Հիմա Զապէլ յանկարծ հինցած գիրքի մը հանդիպեցաւ, որ կարմիր կաշի կողեր և արծաթ ճարմանդ ունէր: Իսկոյն բացաւ զանիկա անոր մէջտեղէն ուր նշան դրուած էր չորցած և անգոյն ծաղիկի փունջ մը: Հասկցաւ անմիջապէս թէ գիրքը փորճիկ Աստուածաշունչ մըն էր, և բացուած էր հոն ուր համարի մը վրայ խոշոր, աչքի զարնող նշան մը գծուած էր կարմիր մեղանով: Համարը սա էր, «Ինչպէս որ մէկ մայր մը իր տղան կը մխիթարէ, այնպէս ալ ես ձեզ պիտի մխիթարեմ»: Եւ անոր քով գրուած էր, «Ի՞նչ անոյք Զապէլ»:

«Կարծես թէ մայրիկա է որ ինձի կը խօսի մեռելներուն մէջէն», ըսաւ Զապէլ զգածուած: «Ինք մտածած ըլլալու է թէ օր մը պիտի գտնէի ա սիկա»: Եւ եռանդով համբուրեց այդ համարը պարունակող երեսը կրկին և կրկին:

«ԼԱՊՏԵՐԻ ԲՈՎԻ ՊԱՀԷ՛»

Այս խօսքը քիչ մը խտուածիւնով ըսաւ իրիկուան կառախուածի կառուղի մը, «Լապտերդ քովդ պահէ: Եթէ բան մը պատահի, կրնայ ըլլալ որ դուն կառախուածին մէկ ծայրը գտնուիս, և լապտերդ միւս ծայրը»: Երկաթուղիին աքծանողը (մագաստը) նոր մարդ մըն էր, և նոր մտած էր գործին: Կառուղիը անոր քով եկաւ վերջին կառքին ետևի ծայրը, և վերի այդ խօսքը լսուեցաւ: Մենք դէպ յառաջ կը նայէինք երբ աքծանողը առջևի ծայրը կ'երթար, և ահա զարմանքով տեսանք որ անոր լապտերը անկիւն մը կախուած էր: Մինչ զանիկա վար կ'առնէր և իր բազուկէն կը կախէր փոխանակ անկիւնի կեռէն կախելու, սկսանք մտածել: Մտածեցինք բաց ի այս անփորձ աքծանողէն ուրիշներու վրայ, որոնք երբեմն իրենց կանթեղները կը դնեն այնպիսի տեղեր ուր քիչ օգուտ կ'ընեն անհրաժեշտ պէտքի տեսնել:

Կը գտնուին կրօնք դաւանող մարդիկ, որոնք պայծառ լոյսերու նման կ'երևնան եկեղեցիին մէջ, բայց իրենց կրօնքը հետ չեն առներ իրենց առօրեայ կեանքին մէջ: Իրենց լապտերը կը կախեն տեղ մը ուր քիչ օգուտ կ'ընէ իրենց մասնաւոր ժամու մը մէջ: Կան դեռահաս անձեր, որոնք այնպիսի տեղեր կ'երթան ուր չեն կրնար տանիլ իրենց կրօնքը: Ուրեմն ի՞նչ

պէս պիտի պատրաստուին օգնել վրտանդի մէջ երողներու: Ի՞նչպէս պիտի կրնան լոյս տալ առաջնորդելու զանոնք կամ օգնելու անոնց որպէս զի հանեն զանոնք նեղութենէ, եթէ իրենց լոյսը իրենցմէ հեռու տեղ մը կը գտնուի պէտքին ատենը: «Գուք էք աշխարհի լոյսը», ըսաւ Յիսուս իր աշակերտներուն, բայց անոնք որ լոյս պիտի տան աշխարհի, իրենց լոյսը պէտք է որ իրենց հետ առնեն: «Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին, որ տեսնեն ձեր բարի գործերը, ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է», նորէն ըսաւ Փրբկիչը: Մի մտնաք որ եթէ մենք զանց ընենք մեր լոյսերը պայծառապէս ծագեցնել, անոնք բոլորովին մարելու վտանգին մէջ կը գտնուին, և ուրիշներ որ լոյս ունին, մեր տեղը պիտի զբաւեն:

ՃԱՄԲՈՐԴԻՆ ԾԱՌԸ

Եւրոպացի ճամբորդ մը որ Մատակաքարի ծովեզերքէն ներս դէպի մայրաքաղաք, Թանանարիփօ, կ'երթար, իր ամանին ջուրը հատուցած էր և ծարաւով կը պապակէր: Իր ընկերներուն մէջ գտնուող բնիկի մը հարցոյց թէ արդեօք ե՞րբ ջուր կրնար գտնուել: «Ե՛րբ որ ուզէք», ըսաւ բնիկը ժպտումով: Եւրոպացին ջուրի նշաններ չէր տեսներ, բայց բնիկները տարին զինքը խումբ մը արմաւենիի նման բարձր ծառերու, որոնք անտառին եզրերը շարուած էին, ուղիղ բունքերով և պայծառ կանաչ, լայն տերևներով, որ զոյգ զոյգ ելած էին բունքէն իրարու դիմաց, և ծառը մեծ հովանոցի մը կը նմանցնէին: Սպիտակամթիւ մարդը հիանալով նայեցաւ ծառին վրայ: «Գուք կը խորհիք թէ ասիկա գեղեցիկ ծառ մըն է», ըսաւ բնիկը, «բայց ես պիտի ցուցնեմ ձեզի թէ օգտակար ալ է»: Ծառից իր տէգով տարեկներէն մէկ զոյգին արմատը այն կէտին վրայ որ ծառին կը փակչէր, և ահա ջուրի հեղեղ մը իջաւ, զոր եւրոպացին իր ջուրի ամանին մէջ վազոյց, և գտաւ որ զով անուշ և պատուական ջուր էր: Ճանապարհորդ խումբը իր ծարաւն անցընելէն և իրենց հետ ալ այն ջուրէն առնելէն ետքը, այն բնիկը որ արդէն խօսած էր, նորէն սկսաւ խօսիլ, «Այս ծառը որ մեզի օգտակար է մէկէ աւելի նպատակներու համար, մենք ճանապարհորդի լծաւ կը կոչենք»: «Բայց անոր պարունակած ջուրը ուր կէ՞ կու գայ», հարցուց սպիտակամթիւը: «Հողէն կու գայ»: «Ո՛հ, ո՛չ», ըսաւ բնիկը: «Տերևները կը ծծեն իրենց վրայ իջող անձրևը, և ջուրը որ կը հաւաքուի հոն, շատ մաքուր և անուշ կ'ըլլայ»:

Այսպէս կը պատրաստէ Տէրը իր արարածներուն երջանկութիւնը և առողջութիւնը, այնպիսի միջոցներով, որոնք անակնկալ են բոլորովին, բայց ճշդիւ կը պատասխանեն անոնց պէտքերուն: Եւ ինչպէս որ Աստուած ջուր կը պատրաստէ ծարաւին, նոյնպէս կը պատրաստէ նաև կեանքի ջուրը ամէն մէկ ծարաւ հոգիին համար: Շատեր չեն գիտեր զանիկա, շատեր երբեք առած չեն անոր համար. և սակայն աղբիւրը միշտ մօտ է մեզի, և ջուրը որ ճանապարհորդին լծաւէն բղխող ջուրէն աւելի մաքուր է, կը մատուցուի ամէն մէկ պապակող հոգիին, և երբ կ'ընդունուի, կ'ըլլայ «Ջուրի աղբիւր մը որ յաւիտենական կենաց համար կը բղխէ»: «Եւ Հոգին ու հարսը կ'ըսեն, Եկուր. և ան որ կը լսէ՝ թող լսէ, Եկուր. ու ան որ ծարաւ է՝ թող գայ, և ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը ձրի առնէ»: Գայտ. Իբ. 17:

ՅՈՒՆԻՍԻ ՀԱՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մ	Ռ	Գ	Ն	Լ	Թ	Ի	Ը	Ն
Ա	Կ	Է	Ղ	Դ	Մ	Տ	Մ	Ա
Կ	Ս	Դ	Է	Մ	Օ	Ք		
Ե	Ղ	Է	Կ	Ի	Ա			
Դ	Է	Մ	Ս	Ա				
Ո	Փ	Ի	Բ					
Ն	Ս	Ա						
Ի	Ք							
Ա								

Լուծեցին, Կ. Պոլիս. — Յովսէփ Պարութեան, Յակոբ Կ. Գերոզեան, Ղազարոս Գ. Գոնտուրաճեան, Ապրիլ Գ. Գոնտուրաճեան, Պանարմա. — Եղիսէ Մ. Այսնեան: Մարգարէ. — Վարդուհի Տօմպալեան, Խոյզ Կերտեան: Վ. ան. — Միհրան Մ. Տ. Սարգիսեան, Յովսէփ Մ. Յովհաննէսեան, Վարդան Յ. Շալճեան: Մամուրէթ իւլ Ազիզ. — Գէորդ Ավարզեան, Տիգրան Մեծատուրեան, Մինաս Ազնաւուրեան, Պարտաւար Կարպետեան, Տօնապետ Խաչատուրեան: Կերթ. — Մեսրոպ Ս. Խանթիմուրեան: Տիգրան Գրի. — Խաչատուր Մուրատեան, Պարզև Փարսաճեան, Յովհաննէս Ի. Միւթէփէլեան, Արուսեակ Թ. Ճարճիսեան: Մարտիկ. — Միհրան Մ. Թերիսեան:

ՀԱՆԵՆՈՒԿ ԾՈՒՐԻ ԳԻՐԲԷՆ

0	0	0	Արեւոտքի զուտարեւն մին.
0	0	0	Փղտալուց մէկ շատուածը.
0	0	0	Արեւիկան Թուրքիոյ մէկ քաղաքը.
0	0	0	Քաղաք մը ուր քարոզէց Պողոս.
0	0	0	Նշանաւոր դաշտ մը.
0	0	0	Յիսուս շուրջից ցուցնել.
0	0	0	Գետ մը Ափրիկէի մէջ.
0	0	0	Յիսուսի մէկ առակը. (Հակառակ կարգով կարգաւ).
0	0	0	Լեռ մը Եփրատի երկրին մէջ.
0	0	0	Թուական անականի մը յոգնակին.
0	0	0	Տանիկու փոքր մարտերէնէն մին:

Յարեկան բաժանորդագին՝ 6 դրամ. արծաթ, կանխիկ, ամեն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտչանաւոց Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ճ. Բ. ԿԻՐՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՅՈՒՅՆԻՆ  
Ճինճանքաւ Եօզուլու, Ամերիկան Խան